Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5835 (2 f.)
23502 – 23504 (3 f.)
5211 (7 f.)
8073 – 8075 (9 f.)
929
V – 96

8075 (Գր)

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Հ. ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԻԳԻԼԵԱՆ

ԽՕՍԵՑԵԱԼ

Ի Հ. ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՕՐՄԱՆԵԱՆ

Ի Ս. Լուսաւորչի Եկեղեցւոջն Օրթագիւղի 18 Յունիսի 1878

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

— 1878 —

13555

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ Հ. ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԻՊԻԼԵԱՆ

ԱՍԱՑԵԱԼ

Ի Հ. ՄԱՂԱԳԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՕՐՄԱՆԵԱՆ

Ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցին Օրնաքիւղէ 18 Յունիսի 1878

4938

Ի՞նչ է, Սրբազան Հայր, Պատուարժան Եղբայրակիցք, և Սիրելի Ազգակիցք իմ, ի՞նչ է որ զմեզ այսօր հոս տեղս հաւաքեց. ի՞նչ է որ ամենուս սիրտը կաւերով համակեց. ի՞նչ է որ զիս ալ կը մղէ և կը յորդորէ պատմել ձեզ մեր կորստեան մեծութիւնը։ Երբոր սիրելւոյն մահը կ'ողբայ սիրելին, երբոր երախտաւորին կորուստը կուլայ երախտաւորեալը, երբոր բազմաչխատ անձին պակսիլը կը սգայ անոր արդեանց վրայ հիացողը, իւր աչաց առջև ունի դոնէ իւր կորստեան յետին նշխարքը, և կարծես թէ դիակնացեալ մարմնոյն ետեւէն կորագլուխ քալած ատեն ինքզինքը կը խաբէ թէ իւր սիրելին իրմէ յաւիտակեալ չէ։ Բայց հոս ո՞ւր է մեր ցաւոց առարկայն. ո՞ւր են մերոյս Կղեմայ պանծալի նշխարքը։

Տասն տասնըմէկ շաբաթ է միայն որ մը յանկարծ լսեցինք եթէ այն անձը, որ բնաւ մէկերնուս օտար չէր, մայրաքաղաքս թողեր և դէպ յարևելս կը չուէ, դէպ այն երկիրները զոր մեզի հայրենիք դիտեմք, բայց մեզմէ քիչերը տեսնալու բաղդն ունեցած են։ Գեղեցիկ առիթ մը՝ զոր պերճասպատիւ նախարարի մը հովանաւորութիւնն իրեն պատրաստած էր, յանկարծ իրեն դիմացը բացեր էին նորէն իրեն սիրեցեալ Հայկական աշխարհին դուռները. ինքն ալ որ ամեն առթէն ազգասիրական օգուտ մը քաղելու մըտադիր էր, դայն ընդդրկեր, և հապճեպ՝ առանց իսկ իւր բարեկամաց և ծանօթից հրաժարական բարև մը տալու՝ նաւ մտեր և հեռացեր էր։ Եղանակը ամառնային ըլլալու սկսեր էր, և հարաւային գաւառաց ճանբան աւելի դիւրինը չէր, սակայն իրեն միտքն ուրիշ էր։ Դեռ չէր ըրած Ասորեստանու և Միջագետաց ճանբորդութիւնը, և կը յուսար որ հոն ալ կրնար հայրենի յիշատակաց մը-

նացորդները գտնալ և տեսնալ, և տեղեկութիւններ առնուլ և ուրիշներուն հաղորդել: Բայց աւա՜ղ, դժբաղդ պիտի ըլլար մեզի իւր նախանձայուզութիւնը: Երբ Բերիա կը թողու և դէպ 'ի Տիգրանակերտ կը չուէ, անապատային երկրին տաքութեան չդիմանար. թանչը և փորհարութիւնը զինքը կ'սկսին նեղել. կը հասնի 'ի Սևերեկ, բայց կը պարտաւորի մահիճ իյնալ, սև օրերնուս սև երեսը ցուցուցած էր զինքն 'ի Սևերեկ, բայց մեք չէինք գիտեր եղածը: Նաօրեայ հանգիստէ ետքը հազիւ թէ կրնայ օրուան մը ևս ճանբորդութիւն ալ ընել և Տիգրանակերտ հասնիլ, և հոն իւր մերձաւորներէն և ծանօթներէն հեռու, իջևանի մը անկիւնը անծանօթ պանդուխտի պէս ախտովը կը հիւծի, մինչև որ բարեփոխաց ումանց գութը՝ իրեն աւելի հանգիստ մահիճ մը և բժշկական արհեստին դարմանները կը հայթայթէ: Բայց 'ի զո՜ւր, վեց օրուան հիւանդութենէ ետքը, այսօրուընէ երեսուն և հինն օր առաջ կը կնքէ իւր մահկանացուն և մարմինը կը յանձնուի հողոյ Տիգրանակերտի աւերակացը քով: Հոն է հոն, եղբարք իմ, մեզմէ շատ հեռու, զինքը սիրողներուն և պատուողներուն աչքէն բացակայ. հոն է որ կը հանգչին լուսահոգի Միպիլեան վարդապետին ոսկերքը: Քանի կը յիշեմք ասկէ ետքը Տիգրանակերտի անունը, ցաւոյ մը ևս նշանակ պիտի ըլլայ մեզի այն, վասն զի պիտի յիշեմք եթէ հոն տարաժամ յափշտակուեցաւ իւր մօրը ազգին գրկէն, ազգասէր և ազգօգուտ զաւակ մը: Այսպէս է որ ցաւք ցաւոց վրայ կը բարդին, և ցաւք ցաւերու ճանբայ կը բանան: Գատտակե՛րտ Տիգրանայ, քանի՜ դառն եղան Հայոյն քու աւերակներդ. քանի՜ ցաւոց առիթներ տուիր դուն մեզի. ե՞րբ պիտի դառնայ բաղդն. ե՞րբ պիտի ընձեռես մեզի խնդութեանց առիթներ:

Բայց թերևս դառնան գեղեցիկ օրեր. այլ չեն դառնար այն արդիւնաւոր անձինքն, որոց արդեանց պտուղը պիտի ըլլան յուսացեալ բարի օրերը: Անոնց յիշատակը միայն կը մնայ անմահ. և քանի կը բաբախեն ազգասէր սրտեր, պիտի յիշուին այն անունները որք բարի գործոյ, առաքինի գործոյ, ազգօգուտ գործոյ, հայրենասէր գործոյ մը հեղինակ եղած են: Խորենացի Քերթողահայրը, որ ուժով զգաց ազգային ոգին, հաճութեամբ մը կըսէր. «Սիրեմ կոչել այսպէս, Հայկ, Արամ, Տիգրան.» բայց Հայկեր, Արամներ և Տիգրաններ մէկ կամ երկու չեղան միայն. այդ անունները նշանակ են ազգին բարերարաց, որոց սերունդը անպակաս է, որովհետև ազգն ալ չպակսիր: Ազգասէրը և ազգասիրութեան դիւցազնը չէ թէ նա է միայն որ զօրութեամբ, որ իշխանութեամբ, որ փառօք կը հռչակուի, հապա նա ևս որ իւր խոնարհ և դոգ փծուն կերպարանքին տակ, յօգուտ իւր ազգին մեծամեծ արդիւնքներ կը ցուցնէ. մտաց և սրտի արդիւնքներ:

Ամենուդ աչքին առջև կուգայ այն խոնարհ կերպարանքը, որ կրօնաւորի խոշոր ասուով, առանց պաճուճանաց, մանաւանդ թէ առանց իսկ կարևոր յարդարանաց, համեստ խօսքովը և հասարակ երևութովը, հեզ բնաւորութեամբը և դիւրամատոյց ընթացիւքը, սովորական անձէ մ'աւելի չէր կարծուեր: Հարկ չկայ որ ըսեմ թէ մասնաւոր արժանիք մը ունէր իմ Միպիլեանս, արժանիք մը զոր քիչ մը տեսութենէ ետքը իւրաքանչիւր ոք դիւրաւ կ'իմանայր, և որուն համբաւը տարածուած էր ոչ միայն իւր ազգին մէջ, այլ նաև այն ազգաց մէջ ուր ինքն չէր գացած: Ձեզի համար նոր բան մ'ըսած չեմ ըլլար՝ երբ զուրցեմ թէ ազգի մը հնախօսութիւնը իրեն կենսական է. վասն զի հոն կը տեսնուին իւր

հիմերը և իւր սկիզբը։ Դժբաղդաբար մեր ազգին հնախօսութիւնը շատ յետնեալ վիճակի մէջ է։ Քանի որ դեռ ներկայ-ներնուս վրայ շատ մը աշխատելու տեղի կայ, բնական է որ անցածնիս անխնամ մնայ։

Առանձինն ճաշակ մը 'ի բնէ հաստատուած էր յայսմ մասին մեր Սիպիլեանի մտաց մէջ. իւր մանկութեան ծանօթները և իւր համբակութեան աշակերտակիցները կը վկայեն թէ պատմական և հնախուզական մասը իրեն աւելի քաղցր էր։ Զորեքտասանամեայ մանուկն Մկրտիչ, վասն զի այս էր մերոյս Կղեմայ աւազանին անունը, դիմեց ինչպէս ուրիշ այլ պատանիներ յԵւրոպէ դտնուող ազգային մենաստաններէն մին, որոց աշակերտներն, ինձ չինկնար զայն հաստատել, բայց հասարակաց բերնէն գովութիւններ ընդունած են։ Բարձրեալն, որ իւրաքանչիւրին բաղդը կը տնօրինէ և ապագայն կը տրամադրէ, առաջնորդեց Սիպիլեան Մկրտչի 'ի Վենետիկ, Մխիթարայ ուխտին միւս ճիւղին վանքը։ Գերմանական աշխարհին մէջ գերմանական հաստատուն և խորին ուսմանց ճաշակը 'ի տղայութենէ իւր մտաց մէջ տոգորուեցաւ։ Ուսումնասէր, ուշիմ, բարեկիրթ, հեզահամբոյր, քիչ ատենուան մէջ մեծ քայլեր առաւ և նորընծայ և աբեղայ եղաւ իւր միաբանութեան գովելի անդամ, և եօթը տարի աշակերտութենէ ետքը, իւր կենաց քսաներորդ առաջներորդ տարին, իսկ Քրիստոսի 1845 թուականին, իւր առաջնորդին ձեռնադրութեամբը քահանայական սուրբ աստիճանն ընդունեցաւ, և միանգամայն Կղեմայ նշանաւոր անունը։

Երբոր աստիճանին սեփհական ուսմունքը աւարտեց, և ալ ազատ էր իւր ճաշակին համեմատ ուսմանց զբաղիլ, Սիպիլեան արդէն որոշեալ ունէր իրեն ընթացքը, հնագիտական մակածութիւնները, և 'ի մասնաւորի դրամագիտական մասը, որ ետքէն իւր սոպարէզը եղաւ։ Հայ հնախօսութեան ուսմունքը կրկին նպատակ ունէր Սիպիլեանի վրայ, միտքը և սիրտը. [մտքին համար ազգային ուսումն, սրտին համար ազգային սէր. և այս երկու դիտմանց մէջ չեմ դիտեր թէ ո'ր քան զոր[առաւել էր մեր լուսահոգի Վարդապետին վրայ։ Հայերէն հնախօսութիւնը թէ ոչ բոլորովին, գոնէ ըստ մասին, նաև օտար հեղինակաց ոմանց ուսմանց նիւթ եղած է. բայց անոնց մտաց միայն ճարակ տուած է և ոչ սրտին. վասն զի օտարազգին չկըրնար ազգասիրութիւն զգալ օտար ազգի մը համար։

Քիչ կ'ըլլար Սիպիլեանի արդիւնքը եթէ տեսական ուսմամբ միայն աւարտէր իւր ընթացքը, և միայն Եւրոպիոյ թանգարանաց մէջ և կամ հրատարակեալ գրոց վրայ փնտռէր [հայրենի յիշատակները։ Այդպիսեաց ազգասիրութիւնն իսկ մասամբ իմն տեսական կը մնայ ինչպէս իրենց ուսմունքը։ Հապա թէ երեք տարի ևս մնաց վանքին մէջ, և անկէ ետքը բացուեցան իւր առջևը այն երկիրները ուր Հայ կայ, և ուր Հայոյն յիշատակները կը պահուին։ Ութամեայ միջոցի մէջ, 1848 էն սկսելով, զանազան անգամներ ճանապարհորդեց Զմիւռնիոյ գաւառը, Առուեալի Հայոց մէջ, և Կոստանդնուպոլիս իւր հայրենական երկիրը. բայց ստէպ կը վերադառնայր 'ի վանս, ուր միշտ նորանոր յիշատակներ և տեղեկութիւններ կը տանէր, և իւր սիրելի ուսման մէջ կը յառաջանայր, այնչափ որ արդէն այն ատենէն իրը գիտնական մը ընդունուած էր Վենետիկի կաճառաց մէջ, և իւր աշխատութեամբը թանգարանաց մէջ եղած հնութիւնները կը լուսաբանէր, և այդ մակածութեան յառաջադէմներն իսկ արևելեան և Հայ խնդրոց նկատմամբ իրեն լուսաւոր կարծիքը

կը խնդրէին, բայց իր դերազանցութիւնը յաջորդ տարիներու մէջ էր։

Քրիստոսի թուականին 1856 տարուան վերջերը եհաս նոր Պարսկաստանու կաթուղիկեայ աղդայնոց մէջ քահանայական պաշտօն վարելու հրամանը, և Սիպիլեան ամենայն փութով դիմեց հոն, վասն զի կը բացուէին այնու իր առջև Հայաստան երկրին դուռները, վասն զի կրնար վերջապէս տեսնալ այդ կողմերը, որ միշտ իր բաղձանաց նպատակ եղած էին, ճանրորդութեամբ մը, որուն թէ միջոցներու հարկ կայր և թէ բարեդէպ առթի։ Տասուերկու տարի մնաց մերս Սիպիլեան այդ հեռաւոր պանդխտութեան մէջ, եթէ պանդուխտ կրնայ ըսուիլ Հայը Հայ հողոյն վրայ։ Իր կեանքը ամենևին հանդիստ չունեցաւ այդ միջոցին մէջ, և շարունակ ճանրորդութիւններով խուզեց ամեն տեղ և ամենայն ինչ, և եթէ դայթակղութիւն չեմ տար ոմանց, ըսեմ յայտնապէս թէ Սիպիլեան քահանային արդիւնքը տեղի եռուն գրեթէ Սիպիլեան դիտնականին արդեանցը։ բայց թէ քահանայի և թէ դիտնականի, միշտ ազգասիրի մը արդիւնք եղան իր աշխատութիւնները և իր գործերը։ Տեսաւ ու քննեց ու գնեց ոչ թէ միայն Դավրէժ և Սպահան և Ջուղայ՝, հապա բոլոր Փայտակարան և Ատրպատական աշխարհը, և ինչուան ներքին Արեաց երկիրները։ և համարձակաբար միջամուխ ըլլալով կրակապաշտից վերջին մնացորդաց մէջ, տեսաւ 'ի մօտոյ և խմացաւ անոնց սովորութիւնները և բնաւորութիւնները, որով կը լուսաբանէր մեղի բաղում ինչ մեր նախնեաց մատեաններէն, որք առանց իր տեղեկութեանց անիմանալի կը մնային։

Պարսիկ Հայաստանէն մտաւ Ռուսական Հայաստանը, և հոն Շիրակայ դաշտը և Սիւնեաց երկիրը, Վաղարշապատու հեռքերը և Անուշ աւերակները, Էջմիածնայ կաթողիկէն և Հայ քրիստոնէութեան խանձարուրը, և Վրահայոց երկիրը մինչև Տփխիս և Ախալցխա, ամենքն ալ իրեն կատարեալ ծանօթացան։ Զկաչկանդեցին իր արշաւանքը Տաճկական Հայաստանու անխնամ մնացած երկիրները իրենց բոլոր վտանգներովը և դժուարութիւններովը։ Արարատէն ցՎասպուրական, Բարձր Հայքէն ցՁորրորդ Հայք, Կարին, Կարս, Բաղէշ, Երզնկա, Աղթամար, Մուշ, Վան, Եդեսիա, Տիգրանակերտ, Մամպուռ և ամենայն երկիր Մեծ Հայոց որ այդ սահմանաց մէջ կը մնայ, ընդունեցան իր գարշապարաց հետքերը։ Ամեն տեղ քննեց ինչ որ հայրենի յիշատակք են. ժողվեց ինչ որ պիտանի տեղեկութիւնք են. լուսաբանեց ինչ որ դժուարիմաց խնդիրք են. հաւաքեց ինչ որ հեռաւորաց մտաց լուսաւորութեան կը ծառայեն։ Երջանիկ աչքեր, որոնք լացին մեր նախնեաց աւերակներուն վրայ. երջանիկ սիրտ, որ եռանդուն բաբախեց հայրենի մեծութեանց մնացորդաց առջև. բայց դժբաղդ ևս, վասն զի դժբաղդութիւն տեսաւ ամեն տեղ, նեղութեանց և հարստահարութեանց վկայ եղաւ ականատես, և թշուառ Հայուն փորձանաց՝ փորձառու և վշտակից։

Սիպիլեանի ազգօգուտ արշաւանքները ծանր հիւանդութենէ արդիլուեցան. միանգամ և երկիցս մահաբեր ախտեր իրենց ճանկը դրին մերոյս Կղեմայ կենաց վրայ, բայց աղատեցաւ Տերամբ, չուզեց Բարձրեալն որ բոլորովին անծանօթ մնայ այն հմտութեանց աղբիւրը. և տկար մարմնով բայց զօրաւոր հոգւով, դարձաւ 'ի Կոստանդնուպոլիս և 'ի Վենետիկ. ուր իր վանաց դանձին մէջ դետեղեց բաղում ինչ, որոնք իր աշխատութեանց մշտնջենաւոր յիշատակ մը պիտի ըլլան։ Փիչ տևեց իր հանդարտութիւնը և նորէն դարձաւ յԱրևելս. բայց այս ան-

գամ Փոքր Հայոց մէջ և անոր սահման-ները պտըտելու համար. տեսաւ հետզհետէ Ամասիա, և Մարսուան, և Տրապիզոն, և Կեսարիա, և Սեբաստիա, և Եւդոկիա, և Սամսուն, և հաւաքեց և խմացաւ կարևորը։ Կիլիկիա չկրցաւ մըտնալ այս անգամ, և միայն ասկէ երկու տարի առաջ առանձին ճանրորդութեամբ մը կատարեց հոն ալ իւր հայկական ուղևորութեանց շրջանը։

Ինչպէս յաղթական զօրականը պատերազմի դաշտերը թափառելէն ետքը սպիացեալ վէրքերով և փարթամ աւարով կը դառնայ իւր տունը, այնպէս կը դառնայր և մերս Կղեմէս։ Իւր այդ արշաւանաց վէրքերը, ներքին տկարութիւններն էին, ստամոքսի և աղեաց՝ զորս ճանրորդութեան մէջ կրած հիւանդութիւններն իւր վրայ թողեր էին. իսկ աւարը բոլորովին իմանալի, հնագիտական տեղեկութիւնները և ազգասէր ըզգածմանց ևս քան զևս իւր սրտին մէջ ամած ըլլալը։

Կրնամք ըսել թէ վեց տարիէ 'ի վեր հոս, իւր ծննդեան քաղաքը, հանդարտութեան վիճակ մը կրցեր էր գտնալ. և իրաւունէ ատեն ալ էր, որ այդչափ ինքզինքը ազգին օգտակար ըլլալու պատրաստելու աշխատելէն ետքը, քիչ մ'ալ այդ օգուտը ուրիշներուն հաղորդելու ատենն ունենար։ Այդ վեց տարուան կեանքը աւելի ծանօթ է ամենուս, վասն զի ամենքնիս ալ տեսանք 'ի մօտոյ իւր գործերը, լսեցինք իւր խօսքերը, իմացանք իւր խորհուրդները, ճանչցանք իւր արժանիքը, հիացանք իւր արդեանցը վրայ, կապուեցանք իրեն հետ սերտ յօդիւ սիրոյ և յարգութեան, այնպէս որ անոնք իսկ որ քիչ օր զինքը ճանչցան, այնչափ կսկիծ կ'զգան այսօր իւր կորստեանը, որչափ կ'զգայ իւր մանկութեան մտերիմը և նաև իւր արենակից հարազատը։

Երբոր Պոլիս մտաւ, ազգային խընդիր մը կը յուզուէր կաթողիկէայ Հայ հասարակութեան մէջ, ոմանց համար եպերելի, ուրիշներուն ծիծաղելի, բայց անոնց որ խնդրոյն իսկութիւնը կը քննեն ազգային ոգւոյ մը սկզբանց գործադրութիւն։ Ազգային իրաւանց խնդիրը չկապուիր ամենևին կրօնական դաւանութեանց հետ. և քրիստոնէական եկեղեցւոյ օրէնքը, որ և է ըլլայ վարդապետութեանց մէջ տարբերութիւնը, չմերժեր ամենևին ինչ որ իրաւանց մասն է. կաթողիկէ ըլլալ հակազգային դիրք մը ըսել չէ. մեր դարուն մէջ ազէկ իմացուած է թէ ինչպէս եկեղեցական և քաղաքական ընկերութիւնք, նոյնպէս և կրօնական և ազգային դրութիւնք կրնան իրենց սահմանին մէջ ազատաբար ապրիլ։ Այդ էր մեր խնդրոյն ալ հիմը, և ազգասէր ոգի մը՝ ինչպէս Միսիրեանը՝ չպիտի կարենար հեռու ապրիլ մեզմէ. անոր համար ալ երբ կարևոր քննութեանց ատեն տըւաւ և խելահաս կերպով իւր որոշողութիւնը ըրաւ, կապուեցաւ մեր դատին և մեր սկզբանց հետ, մեր հասարակութեան աւելի եռանդուն պաշտպաններէն և աւելի գործունեայ աշխատողներէն մէկը եղաւ. և ջանաց ինչչափ որ կրնար, որպէս զի ճշմարտութիւն և իրաւունք յաղթանակեն։ Եւ այդ ընելու համար պարտաւորուեցաւ նաև զոհողութիւններ ընել. վասն զի զոհողութիւն մի էր իրեն համար՝ իւր միաբանութեան հետ միութեան կապը խզելը. այն միաբանութեան՝ որուն այդչափ տարիէ 'ի վեր որդեգրած էր և ծառայած, և որուն նուիրած էր իւր շահը և իւր երկասիրութիւնքը և իւր արդիւնքը, և ուսկից բաժնուիլը ծանր կուգար իւր սրտին. և զայդ կրնամ վկայել ես իսկ, իւր մտերմութեամբը պատուած ըլլալով։

Կ'ամբաստանե՞մ ես արդեօք այսու Վենետիկի Մխիթարեանց միաբանութիւնը

ինչպէս կ'ամբաստանեն բաղումք և կըսեն թէ մտաց ազգասիրութիւնը ունի, այլ ոչ սրտի. բարեացակամ է ազգին ուսմամբ՝ այլ ոչ սիրով. անոր համար ալ հեռու կը մնայ այն ամէն խնդիրներէ՝ ուր ազգին իրաւանց ու փառաց և շահուն փոյթը կը տիրէ : Քա՛ւ յինէն դատախազ կամ դատաւոր կանգնիլ արդիւնաւոր միաբանութեան մը, ուրանալ ինչ որ օգտակար արդասիք ունեցաւ, և կամ կարծել թէ չունենայ ինքն բոլորովին այն հոգին՝ զոր իւր աշակերտներէն շատերուն վրայ տեսանք և կը տեսնամք : Բայց ցաւալի է միայն դիտելը որ ոչ միշտ միաբանութեան աւագանին սոյն ոգւոյն համեմատ կը գործէ և կը վարուի. ցաւալի է տեսնալը որ իւր անդամներէն որոնք որ ազգասէր զգածմանց աւելի կը հեւանին, կը պարտաւորուին իրեն հետ կապերնին խզել. ցաւալի է և ինձ յիշել ասէն թէ և. Հայր Գղեմէս պարտաւորուեցաւ վերջապէս այդ զոհողութեան :

Բայց կըսուի թէ իւր կենաց վերջին կէտին մէջ ուրացաւ իւր այդ անցեալը և հակազգային կուսակցութեան իրաւունք տուաւ : Այդպիսի լուր մը տարածուեցաւ իրաւ քաղքիս մէջ զանազան պարագաներով մէկտեղ, այլ ստոյգ տեղեկութիւնները չեն հաստատեր ինչ որ ումանք ուզեցին պատմել: Կը լսենք թէ Լատին քահանայ մը խորհուրդ պաշտելու համար ոգեվարին քով մտեր է, բայց թոչակ իսկ չէ տուեր. իսկ յետս կոչում, ստորագրութիւն և յայտարարութիւն, այս ամենքը մեզի հասած լուրերուն մէջ չեն գտնուիր : Այլ եթէ այսօր մեր դիմացը դնեն Սիպիլեանի կիսամահ ձեռաց գիրը, և անով իւր համոզողութեան նշան մը ուզենան տալ, պիտի ընդունի՞մք արդեօք այդ դատաստանը : Դժուարին կը կարծուի խնդիրը, վասն զի մեռնողը ա՛լ չկրնար խօսիլ և իւր միտքը մեզի յայտնել և վկայել. սակայն կրնան յայտնել անոնք որոնք՝ ծանր հիւանդութիւններ կրած են. կրնան խօսիլ անոնք՝ որոնք ինչուան մահուան կէտը հասնելով ետ դարձան. կրնամ վկայել ես իսկ որ ինչուան այն կէտը հասած ըլլալով, գիտցայ թէ ի՛նչ աստիճանի մէջ է մարդուն միտքը այն պարագաներուն մէջ :

Սիպիլեանի նման վիճակի մէջ գտնուեցայ և ես. հեռու մերձաւորներէ ես ալ վտանգաւոր կէտին մօտեցայ, իմ շորս կողմս ալ պաշարեցին այնպիսիներ՝ որոց մեծ քաջութիւնը ապիկար հիւանդին և ոգեվար անձին կարծեացը վրայ յաղթութիւն ընելն է. գործեր մը ըրեր եմ, կը լսեմ. սոյն գործերը ըրած ըլլալս չեմ գիտեր. բարեբաղդաբար ըրածիս վրայ զղջալու առիթ չունիմ. բայց ո՞չ ապաքէն նոյն դիւրութեամբ կրնայի այնպիսի գործեր ըրած ըլլալ որոնք իմ մտացս և կամացս համաձայն չըլլան : Ի՞նչ ոյժ կրնան ունենալ ուրեմն վերջին կէտին հասած անձին մը գործերը որոց գործողը ոչ խիղճը ունի, ոչ դիտակցութիւնը, ոչ յիշողութիւնը : Այդպիսի գործերո՞վ արդեօք կը հաստատուի ճշմարտութիւն մը : Անզո՞ր դատ որ այդպիսի փաստերով պիտի պաշտպանուի : Սիպիլեանի համար դեռ չէ ստուգուած, թէ իւր անցելոյն հակառակ գործ մը ըրած ըլլայ: Եթէ գիր մ'ալ ցուցնեն, անոր վաւերականութիւնը խիստ քննութեան կուզէի ենթարկել, և եթէ յայտմ իսկ դիւրաւ զիջանիմք, ո՜հ, ինձ և ամենուդ համար ալ վերադասելի է՝ առողջանձն և առողջամիտ և իւր բովանդակ կարողութեանցը գործածութեան մէջ գտնուող Սիպիլեանին ըրածը և որոշողութիւնը, քան թէ մահուան դուռը հասած, իւր անձին դիտակցութիւնը կորսնցուցած, և իւր կարողութեանցը գործածութենէն զրկուած Սիպիլեանին գործը և խօսքը:

Անոր համար, եղբա՛ր, ես բոլորով սրտիս կը խօսիմ նորա դովեստը, վասն

դէ կը հնչէն իմ ականջիս խորին համոզ֊
մամբ բացատրուած իւր ազգասիրական
սկզբունքները, և չեմ կրնար ամենևին
ընդունիլ, որ Սիպիլեանը գիտնալով և
ուզելով և լրածը և խօսածը իմանալով
ուրանայ ինչ որ նեղութեամբ և զոհողու֊
թեամբ պաշտպանեց և ջատագովեց: Ով
որ հակառակը կուզէ պնդել, անիկայ չէ
ճանչցած Սիպիլեանի հոգին, կամ չէ գիտ֊
ցած անոր ազգանուէր սկզբունքը և ար֊
գիւնքը: Շատ մը զուրցեցի, շատ մըն ալ
ես կրնայի զուրցել: Բացատրեցի համա֊
ռօտիւ իւր կենաց ընթացքը, յիշեցի իւր
գլխաւոր ձիրքերը. բայց չըսի տակաւին
իւր մասնաւոր արդիւնքները: Խօսեցայ
իւր հնագիտական հմտութեանց վրայ,
բայց չըսի թէ Լօնտօնի, Պէրլինի և Բե֊
դըրսպուրկի կաճառներն իրեն թըղ֊
թակցութեանց և տեղեկութեանց ի՞նչ
աստիճանի յարգ կուտային. չըսի թէ
իւր հրատարակութիւնները հեղինակի գը֊
րութեան պատիւը ունէին. չըսի թէ ան֊
անի հնադէտք, Շլիման մը, Շլումպէր֊
ժէր մը, իւր կարծիքը լսելու համար
ճանբորդութիւններ ալ կընէին. չըսի թէ
Օսմանեան Թանգարանին կարգադրու֊
թիւնը և լուսաբանութիւնը բազում ի֊
իք իւր արդեամբն էին, ուր և երկ֊
րորդ վերատեսչի պաշտօնն ունէր. չըսի
թէ իւր վերջին ճանբորդութիւնն ալ Օ֊
գոստափառ Դրան յանձնարարութեամբն
էր, պետական շահերը իւր գիտութեամբ
պաշտպանելու համար:

Խօսեցայ իւր դրամագիտական մակա֊
ծութեանց մէջ ունեցած արդեանց վը֊
րայ. բայց չըսի թէ հին դրամոց ժամա֊
նակագրական չարադասութիւնը նոր կա֊
նոններով և գիտերով ճոխացոյց. չը֊
սինք թէ Ռուբինեան հարստութեան դը֊
րամոց կատարեալ հաւաքածոյ մը պատ֊
րաստեց, 450 կտորէ աւելի դրամով, ո֊
րոց մեկնութիւնն ալ գրեց և հրատարա֊
կութիւնը պատրաստեց, և եթէ մահը
չհասնէր, պայն 'ի լոյս ալ ընծայելու մտօ
էր ձեռնտուութեամբ Վսեմ. Պալեան
Սարգիս Իշխանին, որ ուրիշ առիթներու
մէջ ալ իրեն քաջալեր եղած էր: Չըսի
թէ ինքն միայնակ կարգադրեց և լու֊
սաբանեալ հրատարակեց տասն հազար
կտորէ բաղկացեալ արևելեան դրամոց
հաւաքածոյ մը հրամանաւ Պերճապատիւ
Սուպհի փաշային, որ այդ հաւաքածոյին
տէրն է:

Մեզ որ իրեն ուղեկից չէինք, Սի֊
պիլեանը պատրաստած էր նշանաւոր գը֊
րութիւն մը, իւր երկոտասանամեայ՝ ազ֊
գասիրական և գիտնական ուղևորու֊
թեանց վէպը. ուր գեղեցիկ և նորանոր
գիտելեօք, քաղցր հայրենասիրական ըզ֊
գածմանց բացատրութեամբք. Հայ սըր֊
տերու գիւր և մխիթար և բաղձանաց
յագեցուցիչ, ուղեցոյց մը անոնց որ իր֊
մէն ետքը հայրենական ուսմանց և խու֊
զարկութեանց կը պարապին: Բայց ե֊
ղո՛ւկ. ասկէց ութը տարի առաջ հանդի֊
պած Բերայի հրդեհը, որ այդչափ տու֊
ներ աւերեց և այդչափ գանձեր սպա֊
ռեց, մոխիր դարձոյց նաև Սիպիլեան
վարդապետին ուղևորութեանց ձեռագի֊
րը. լափլիզող կրակը կորզեց նորա ձեռ֊
քէն իւր աշխատանքը՝ յառաջ քան որ մա֊
հուն մանգաղը կորզէ մեզմէ իւր հեղի֊
նակը:

Ձեզմէ շատերը հարկաւ ունկնդիր ե֊
ղան այն պարզ, բայց ազդու բանախօ֊
սութեանց, որովք երբեմն երբեմն դըպ֊
րոցական սրահներու և բարեկամաց ա֊
կումբներու, ինչպէս նաև գիւղիս բանա֊
սիրաց Լսարանին մէջ կը մեկնաբանէր Հա֊
յաստանու այս կամ այն կողմին գիւղը
և բերդը և վիճակը, եղածը և աւրուա֊
ծը և կորսուածը. ի՛նչ չափ տեղեկու֊
թիւններ, ի՛նչչափ գիտնական հարստու֊
թիւններ. այսու հանդերձ, այն ամե֊
նայն որով երկու կամ երեք ժամուան
ունկնդրութիւնը եւ կու կամ երեք վայր֊

կենի պէս կանգնէր՝ կաթիլ մի 'ի դուլէ էին միայն, առանց գրաւոր յիշատակաց ձեռնտուութեան, սոսկ միտքին մէջ սեւեռեալ կէտերը եղած էր. ի՞նչ պիտի ըլլային իւր սկզբնագիր յիշատակարանները. իւր գիւտերուն կատարեալ պատմութիւնը։ Բայց ո՞ր բանի մէջ դժբաղդութիւնը չհալածեր 'ի մօտոյ Հայոյն օգուտները։

Գիտնականաց ոմանց բռնած ճանբէն բոլորովին օտար, մեր Միսիլեանը չէր պահեր իւր գիտութիւնը իւր անձին, ոչ ալ զայն անձնական շահուց գործի մը կընէր, հապա անձանձիր կաշխատէր, և խնդիրը կանխելով ձեռքէն եկածը կը կատարէր. ոչ ալ իւր գտնուած դրից վրայ սանձանալով կանարգէր աւելի ստորին կարծուած զբաղանքները, միայն թէ ազգային յառաջադիմութեան օգտակար սեպուէին։ Անոր համար էր որ նախակրթական վարժարանաց մէջ ալ դասատուի և վարժապետի պաշտօն կը վարէր. առանձնաւորի՛կամ ընդհանրութեան՝ որ իւր ձեռնտուութիւնը կը խնդրէր, չէր զբաղնար զայն ամենևին. և աչքովնիս տեսանք որ այսքանոյ արժանեաց տէր անձ մը ազգային Մատենադարանին մէջ գրոց կարգադրութեան և աղուսակը յօրինելու կը ծախսէր իւր անդին ժամերը։

Զկայր ազգային հաստատութիւն կամ ընկերութիւն մը, որուն Միսիլեանը կամ անդամ կամ գործակից կամ գործադիր չըլլար։ Քանի՛ ընկերութիւնք կան ազգին մէջ, Համազգեացը, Ազգային Մատենադարանինը, Արարատեանը, Արևելեանը, Բանասիրացը, Կարօտելոց Օժանդակը, և՝ որ այլն ևս, ամենն ալ կը վկայեն որ Միսիլեանը իրենց օգտին շատ աշխատած է և իրենց ամենէն աւելի բազմերախտ ընկերներէն մէկը եղած է։

Ճշմարիտ ազգասիրի զգածմամբ լեցուն՝ իրեն համար ազգայինը դաւանութեամբ կամ կուսակցութեամբ չէր որոշուեր. հապա Հայը կը դիտէր միշտ և ոչ աւելի։ Ազատաբերան կրնամ հաստատել թէ՝ այդ ճշմարտասէր սկզբունքը, զոր այսօր, մեր դժբաղդ տարաձայնութիւններէն ետքը, կը տեսնամք ծաւալիլ և մեր մէջ տիրանալ, իւր գլխաւոր քարոզիչներէն մին պիտի ճանչնայ զՄիսիլեանն, և խօսիցս հաստատութեան եթէ ուրիշ փաստ չունենայի, բաւական էր ինձ այսօր հոս իւր յիշատակը պատուելու փութացողներուն տեսութիւնը։ Երանի՜ թէ ինչ որ այսպէս գեղեցիկ կըսկըսի, և այսպիսի ազգասիրաց օրինակովը կը հաստատուի, իւր կատարեալ պտղովը զմեզ ուրախացնէ, և փարատէ մեր մէջէն բոլորովին ինչ որ այդչափ վնասակար եղաւ յանցեալն։

Ազգասիրութեան ասպարէզը, եղբա՛ր, միայն գիտութեան և դասատիրակութեան և զգածմանց մասը չէ. ազգասէրը կը հոգայ նաև ազգին կարօտեալը և աղքատը, և մերոյս Միսիլեանի պարծանքը կարծես թէ իւրք աղօտացեալ պիտի երևնար՝ եթէ նաև 'ի սմին արիաբար նահատակած չըլլար։ Կը տեսնայիք ստէպ լուսահոգի վարդապետը, որ հոգնած ու քրտնած, պաշտօնարաններէն և ոստիկանութեան դուռնէն կը դառնայր, և կամ փութալով հեռու տեղեր կը քալէր, մեծամեծաց և ունևորաց տուները կերթար, ինչպէս նաև ստորին թաղերու մէջ ազգային խրճիթներու այցելութիւններ կուտայր։ Առանց իմանալու թէ ի՛նչ է ըրածը, կը տեսնայիք թէ քըրտնակնդրուկ աշխատութեամբ կը հոգնի և կը պարտասի. գիտցէք ուրեմն թէ իրեն ազգասիրութեան մասնաւոր առարկայ մը ըրած էր՝ լքեալ աղքատը և կարօտ բանտարկեալը. անոնց ետևէն կը պարտէր, և կարևոր արտօնութիւններն ստանալով նաև արդիւեալ բանտից խորշերը կը մըտնար, ինչպէս կրնան վկայել ոստիկանութեան պաշտօնեայք։ Կը տեսնայր և կի-

մանայր թէ ո՛վ է լքեալը և օգնութեան կարօտը, և անոնց նպաստելու համար ունեւորին ողորմութիւնները կը մուրայր․ և իր ձեռքովը զայնս կը բաշխէր․ աղքատիկ մօր ձեռքը իր որդեկին սնունդը կը յանձնէր․ անոք բանտարկելոյն հաստատուն կերակուր մը կը պատրաստէր․ կարօտ պարտապանին պարտքը կը վճարէր, որպէս զի իր չքաւորութեան յանցանքին տալիքը հատուցանելով և բանտէն ազատելով, իր ընտանեաց կարենայ օգնել իր առօրեայ աշխատութեամբը։ Թերևս ձեզմէ շատերուն անծանօթ ըլլայ այսպիսի գեղեցիկ գործ մը։ Բայց հոս է որ աւելի կը փայլի մեր լուսահոգի վարդապետին գովեստը։ Անունը Կղեմայ և գործը գթութեան․ անունը գործոյն յարմար, գթածանուն վարդապետին կեանքը գթած սրտի օրինակ, և Քրիստոսեան խրատուն աշակերտ, որ ձախէն պահել կը հրամայէր ինչ որ աջովը կը գործուի։ Այդ է, եղբա՛րք, ճշմարիտ քահանայութիւնը, զոր Քրիստոսի օրէնքը կը հաստատէ․ ոչ բարուրանօք հաւատացելոյն միտքը ամբոխել, ոչ անձնահաճ ճանբաներով տիրել կամ իշխել, ոչ սրբութեանց պատրուակին տակ օտարոտի նպատակաց ծառայել։ Այլ իր աշխատանաց նպատակ հաստատել անուսը և կարօտը, մասնաւորն ալ ընդհանուրն ալ, և անոնց նպաստելու համար ունեցած երկնային կոչման հաւատարիմ գտնուիլ։

Այս են Միքիլեանի պարծանքները, ճշմարիտ քահանայական փոյթը, ազգային յառաջադիմութեան նախանձաւորութիւնը, հնախուզական արդիւնքը, նշանաւոր գիտութիւնը, անձանձիր աշխատանքը, և նոյն իսկ սոյն աշխատութեանց մէջ մահ գտնելը․ այս ամենայն որ սիրելի ըրաւ մեզի իր անձը, որով պատկառելի է ամենեցուն իր անունը, անով անմահ պիտի մնայ իր համբաւը։ Եթէ ուրիշ ժամանակի մը մէջ ապրէր, թերևս իր աշխատանաց համեմատ արգասիքն ալ տեսնելով կը մխիթարուէր, բայց և հիմայ իր աշխատութիւնքը ապառաժուտ երկրի վրայ ցանքելու նետուած չեն, այլ գեղեցիկ սերման պէս հողի տակ են․ և կենդանի է Աստուած, որ պիտի աճին օր մը յուռթի և բեղմնաւոր։ Մեզի պարտք է հոգալ որ անոնցմէ բան մը չը կորսուի և իր թողած գրաւոր յիշատակները և իրեն հաւաքած հայրենական նշխարքը ամբողջաբար պահուին ընդհանուր տեղ մը և ըլլան իր յիշատակին կենդանի մահարձան, և իր ազգասէր իղձերը մշտնջենաւորելով ծառայեն յարաժամ 'ի վայելս ազգասիրաց և 'ի խթան աշխատասիրաց։ Երբոր Հայաստան իր հայրենական մնացորդները խուզարկելու բարեդէպ առիթն ունենայ, պիտի որոնէ այն ատեն Միքիլեանը, և այլ չպիտի գտնայ․ գտնայ գոնէ անոր աշխատութեանց ձեռնտուութիւնը․ բայց աւելի ևս կուզէի որ գտնայ այնպիսիներ, որոնք իրեն մխիթարութիւն մի ըլլան իւրեանց կարողութեամբը և բարեյօժար փութովը։ Կուզէ՞ք ազգայինք իմ, ազգասէր անուանիլ, և ազգասիրին յիշատակը պատուել, անոր օրինակին նմանեցէք, անոր սկզբունքը ունեցէք, անոր աշխատանաց հետևեցէք, անոր արդեանցը նախանձաւոր եղէք։ Ազգասէրք որք եղէն, հրճուին ձեր վրայ իրենց յաւիտենական հանգիստէն, և խայտան անոնց ոսկերքը իրենց փառաց շիրմին մէջ։ Ազգասէրք որք պիտի գան, օրհնեն ձեր անունը, ինչպէս մեք կ'օրհնեմք այսօր բազմարդիւն Միքիլեան Հօր Կղեմայ վարդապետի անունը․ պատուեն ձեր յիշատակն ալ՝ ինչպէս կը պատուեմք այսօր ազգասիրի մը յիշատակը։